ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆ *

ՀՏԴ 339.5 *DOI: 10.52063/25792652-2023.1.16-200*

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Տնտեսության կարգավորման և միջազգային
տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի
«Միջազգային տնտեսական հարաբերություններ»
ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
tmikayelyan.rm@gmail.com
ORCID: 0000-0001-9265-2783

Սույն հոդվածի նպատակն է իրականացնել ՀՀ արտաքին առևտրի համապարփակ վերլուծություն՝ ըստ արտահանման, ներմուծման և ապրանքաշրջանառության հիմնական միտումների, արտահանվող և ներկրվող գործընկեր երկրների, հիմնական ապրանքախմբերի: Բացի դրանից, հոդվածում հեղինակի կողմից իրականացվել է ՀՀ արտահանման և ներմուծման ինտենսիվության համաթվի հաշվարկ՝ մի քանի առևտրային գործընկեր երկրների հետ: Աշխատանքի խնդիրն է բացահայտել ՀՀ արտաքին առևտրի հիմնական միտումները, ինչպես նաև գնահատել առևտրի զարգացման հնարավորություններն ու ներուժը: Այս համատեքստում, համեմատական, համադրական, պատմական շարքերի վերլուծության մեթոդների միջոցով հեղինակը ներկայացրել է դիտարկվող տարիների ընթացքում Հայաստանում արձանագրված առևտրի գործընթացները՝ վեր հանելով հիմնական միտումներն ու ուղղությունները:

Կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ արտաքին առևտրային գործընթացներն ունեն սահմանափակ դիվերսիֆիկացիա ինչպես արտահանվող և ներմուծվող գործընկեր երկրների խմբի, այնպես էլ ապրանքախմբերի ուղղություններով: Մյուս կողմից, արտաքին առևտրի ինտենսիվության համաթվի հաշվարկվման արդյունքում բացահայտվել են մի շարք չիրացված հնարավորություններ ինչպես ԵԱՏՄ անդամ երկրների (բացառությամբ՝ Ռուսաստանի), այնպես էլ Չինաստանի ու եվրոպական երկրների հետ: Այս համատեքստում, առևտրային չիրացված հնարավորություններն ու դրանք հնարավորինս իրացնելը ուղղակիորեն անդրադառնալու են ինչպես ՀՀ արտաքին առևտրի, այնպես էլ ընդհանուր տնտեսության զարգացման վրա:

Հիմնաբառեր՝ *Հայաստան, ԵԱՏՄ, ԵՄ, արտաքին առևտուր, ապրանքաշրջանառություն, արտահանում, ներմուծում, ինտենսիվություն:*

---

* Հոդվածը ներկայացվել է 12.02.2023թ., գրախոսվել՝ 20.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

Ներածություն

ՀՀ արտաքին առևտրի համապարփակ վերլուծություն

Հայաստանում առկա են առևտրային կարողություններն ու տնտեսական աճը սահմանափակող բոլոր հնարավոր խոչընդոտները՝ սահմանափակ ռեսուրսներ, բարձր տրանսպորտային ծախսեր, ծովային ելքի բացակայություն, շրջափակման ենթարկված ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքներ, խորհրդային տարիներից ժառանգած և քիչ արդիականացված տնտեսական համակարգ և այլն: Արտաքին առևտուրը սերտորեն շաղկապված է երկրի ողջ տնտեսության հետ: ՀՀ արտաքին առևտրի առանձնահատկությունները հասկանալու, արտաքին առևտրի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար նախ և առաջ դիտարկենք ՀՀ արտահանումը, ներմուծումը, առևտրային հաշվեկշիռն ու ապրանքաշրջանառությունը 2010-2022 թթ.:

Դիտարկվող 2010-2022 թթ. ՀՀ ապրանքաշրջանառության միջին տարեկան աճի տեմպը կազմել է 11.3%: Մասնավորապես, 2010 թ. համեմատ 2022 թ. ապրանքաշրջանառությունն ավելացել է 194%-ով՝ կազմելով 14.1 մլրդ ԱՄՆ դոլար: Ապրանքաշրջանառության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է 2022 թ., իսկ ամենացածր ցուցանիշը՝ 2015 թ.՝ կազմելով 4.7 մլրդ ԱՄՆ դոլար:

Ըստ արտահանման և ներմուծման ծավալների՝ ապրանքաշրջանառության վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ արտահանման միջին տարեկան աճի տեմպը 2010-2022 թթ. կազմել է 16.2%, իսկ ներմուծմանը՝ 9.4%: Ուսումնասիրություններն արձանագրում են, որ թե՛ արտահանման և թե՛ ներմուծման աճի տեմպերը եղել են բացասական 2015 և 2020 թվականներին: Սա կարելի է հիմնավորել 2014 թ. Ուկրաինայի և Ռուսաստանի միջև տեղի ունեցած համակարտության առաջին փուլով:

Իսկ 2020 թ. արձանագրված արտահանման և ներմուծման ցուցանիշների բացասական աճի տեմպերը պայմանավորված են եղել COVID-2019 համավարակի տարածմամբ, որի հետևանքով կիրառվող սահմանափակումներն անմիջապես անդրադարձել են ամբողջ համաշխարհային տնտեսության, այդ թվում՝ ՀՀ առևտրի ծավալների վրա:

2010-2022 թթ. ներմուծման նվազագույն ցուցանիշը ՀՀ-ում գրանցվել է 2015 թ.՝ կազմելով 3.2 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ առավելագույնը 2022 թ.՝ 8.7 մլրդ ԱՄՆ դոլար: Իսկ արտահանման ամենացածր ցուցանիշը արձանագրվել է 2010 թ.՝ կազմելով 1.4 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձրը՝ 2022 թ.՝ 5.3 մլրդ դոլար: Պետք է նշել, որ 2022 թ. Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալը 2021-ի համեմատ աճել է 77.7%-ով: Արտահանման 47.6%-ը բաժին է ընկնում ԱՊՀ երկրներին, որի գերակշիռ մասը՝ Ռուսաստանին (45%), 14.4%-ը՝ ԵՄ երկրներին, հիմնականում՝ Նիդերլանդներ (4%) և Բուլղարիա (3.9%), իսկ 38%-ը՝ այլ երկրներին՝ ամենից շատ՝ ԱՄԷ (10%) և Չինաստան (6.9%): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս աճի տեմպերը մեծապես կապված են արտաքին գործոնների ազդեցության հետ, որոնցից մեկն առնչվում է 2022 թ. փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական հակամարտությանը: Այս հակամարտության հետևանքով Ռուսաստանի նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցները խոչընդոտ են դարձել ռուսական առևտրի համար: Մյուս կողմից, հակամարտությունը դարձել է «հնարավորություն» ՀՀ տնտեսության համար, քանի որ մի շարք երկրներից մի խումբ ապրանքներ ներմուծվում են Հայաստան ռուսական շուկա վերաարտահանելու նպատակով: Սա է պայմանավորում Հայաստանում ներմուծման ու արտահանման աճի միտումները 2022 թ.: Հաջորդ արտաքին ազդեցության գործոնը պայմանավորված է 2022 թ. ԱՄՆ դոլարի փոխարժեքի տատանմամբ, ինչը, իր հերթին, արհեստականորեն մեծացրել է ամերիկյան արժույթով հաշվարկվող Հայաստանի արտաքին առևտրի աճի ցուցանիշները:

Դիտարկվող բոլոր տարիներին Հայաստանում ներմուծումը գերազանցել է արտահանմանը, այդ իսկ պատճառով միշտ ունեցել ենք առևտրային բացասական հաշվեկշիռ: Միևնույն ժամանակ, պետք է նշել, եթե 2010 թ. ներմուծումը գերազանցել է արտահանմանը 3.6 անգամ, ապա 2022 թ.՝ 1.6 անգամ:

Առևտրային հաշվեկշռի ամենափոքր ճեղքվածքը դիտվել է 2016 թ.՝ պայմանավորված նրանով, որ արտահանումը ավելացել էր 20.6%-ով, մինչդեռ ներմուծումն աճել էր ընդամենը 1%-ով: Սա կարելի է հիմնավորել նրանով, որ ՀՀ-ն 2015 թ. հունվարի 2-ից դարձել է ԵԱՏՄ անդամ: Եվ եթե 2015 թ. դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման ծավալը կազմել է 17%, ապա արդեն 2016 թ. այն դարձել է 22%: Զուտ արտահանման ամենամեծ ճեղքվածքը դիտարկվող ժամանակահատվածում գրանցվել է 2022 թ.-ին: ՀՀ արտահանման մեծ աճին զուգահեռ՝ 63.5%-ով աճել է նաև ներմուծումը՝ կազմելով 8.7 մլրդ դրամ, ինչը ազդել է զուտ արտահանման հաշվեկշռի վրա:

Քանի որ արտահանման հիմնական գործառույթներից մեկը ներմուծման ֆինանսավորումն է, պարզենք, թե ներմուծման քանի տոկոսն է ֆինանսավորվել արտահանման հաշվին, հաշվենք ներմուծման ծածկման գործակիցը (արտահանման և ներմուծման հարաբերակցությունը): Վերջինիս լավագույն ցուցանիշը գրանցվել է 2022 թ., երբ արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 61.1%-ը, վատագույնը՝ 2010 թ.՝ 27.8%, ինչը պայմանավորված է դիտարկվող ժամանակահատվածում ամենացածր արտահանման ծավալներով: Դիտարկվող ժամանակահատվածում ներմուծման ծածկման գործակիցը միջինում կազմել է 45%: Տնտեսական տեսանկյունից անվտանգ է համարվում ներմուծման գոնե 50%-ի ֆինասավորումը արտահանումից ստացված եկամուտների հաշվին:

Այժմ անդրադառնանք ՀՀ արտահանման ու ներմուծման ցուցանիշների դինամիկային՝ ըստ ապրանքախմբերի: Դիտարկվող բոլոր տարիներին արտահանման մեջ գերակշռող ապրանքախումբը հանքահումքային արտադրանքն է, որին 2022 թ. բաժին է ընկել արտահանման 19.1%-ը: 2014թ. համեմատ 2022 թ. վերջինիս արտահանումն ավելացել է ավելի քան 2.5 անգամ՝ կազմելով 1.2 մլրդ ԱՄՆ դոլար: Հանքահումքային արտադրանքի մեջ ամենամեծ բաժինն ունեն պղնձի հանքաքարը, էլեկտրաէներգիան, ցինկի և մոլիբդենի հանքաքարը: Դիտարկվող՝ 2014-2022 թթ. ժամանակահատվածում հանքահումքային արտադրանք ապրանքախմբին միջինում բաժին է ընկել ողջ արտահանման 28.1%-ը:

2022 թ. Հայաստանի արտահանման երկրորդ մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից ապրանքախմբին: Դիտարկվող ժամանակահատվածում ապրանքախմբին միջինում բաժին է հասել ՀՀ արտահանման 15%-ը: 2021 թ. համեմատ ապրանքախմբի արտահանման ծավալները ավելացել են 203%-ով՝ կազմելով 989 մլն ԱՄՆ դոլար:

Արտահանման մեջ հաջորդ խոշոր ապրանքախումբը պատրաստի սննդի արտադրանքն է: Դիտարկվող ժամանակահատվածում այս ապրանքախումբի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ կազմել է միջինում 22%: 2014 թ. պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը կազմել է 338 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2022 թ. ցուցանիշն աճել է 2.6 անգամ՝ հասնելով 877 մլն ԱՄՆ դոլարի: Նախորդ տարվա համեմատ՝ 2022 թ. պատրաստի սննդի արտադրանքի արտահանումն ավելացել է 40%-ով: Հիմնական արտահանվող ապրանքներից են՝ պահածոներ, մրգահյութ, ջեմ, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ, ծխախոտ: Պետք է նշել, որ վերոհիշյալ երեք ապրանքախմբերը 2022 թ. կազմել են Հայաստանի ընդհանուր արտահանման 54%-ը: Արտահանման մեջ հաջորդ բարձր ցուցանիշներն արձանագրել են ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ և այլ ապրանքախմբերը: Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ ապրանքախմբի

արտահանումը 2021 թ. համեմատ 2022 թ. աճել է 12 անգամ՝ կազմելով 695 մլն ԱՄՆ դոլար:

Դիտարկվող ժամանակահատվածում ներմուծման ապրանքային կառուցվածքում առաջատար ապրանքախումբը հանքահումքայինն է, բացառությամբ 2022 թ.-ի: 2022 թ. ներմուծման ամենամեծ տեսակարար կշիռը ունեցել է մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ ապրանքախումբը, որին բաժին է ընկել ներմուծման մոտ 19.6%-ը: Պետք է նշել, որ այս ապրանքախումբը բոլոր տարիներին ունեցել է մեծ տեսակարար կշիռ և 2014-2022 թթ. միջինում կազմել է ներմուծման 16%-ը: 2022 թ. երկրորդ խոշոր մասնաբաժինն ունեցել է հանքահումքային արտադրանք ապրանքախումբը՝ 13.6%: Այս ցուցանիշը դիտարկվող ժամանակատվածում ՀՀ ողջ ներմուծման մեջ միջինում կազմել է 17%: Հատկապես մեծ է դիզելային վառելիքի, մասնավորապես նավթի և նավթամթերքի, նավթավերամշակումից ստացված մնացուկի ներմուծումը:

Ներմուծման կառուցվածքում մեծ է նաև թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից, պատրաստի սննդի արտադրանք, ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից, բուսական ծագման արտադրանք և քիմիական արտադրության ապրանքներ ապրանքախմբերի տեսակարար կշիռը: Այս 5 ապրանքախմբերի ներմուծումը 2022 թ. կազմել է Հայաստանի ներմուծման 33%:

Այսպիսով, չնայած վերջին տարիներին ՀՀ արտահանումը դրսևորել է նշանակալի աճի միտում, արտահանման աճի բազան դեռևս մնում է սահմանափակ, քանի որ արտադրական սուղ հնարավորությունների պայմաններում արտադրված ապրանքները, որոնք կարող են արտահանվել, շատ դեպքերում չեն բավարարում միջազգային շուկայի պահանջներին: Հայաստանը, ունենալով արտահանման հումքային ուղղվածություն, գրանցում է տնտեսության հետընթաց զարգացում՝ միջազգայնորեն ոչ մրցունակ արտադրությունների արմատավորման պայմաններում:

Արտահանման մեջ գերակշռում է միջանկյալ հումքը, որի արտադրությունում ստեղծվող ավելացված արժեքը սահմանափակ է. բացի դրանից, հումքի գները ենթակա են նշանակալի տատանումների, ինչն էլ ավելի է մեծացնում արտահանման խոցելիությունը: Իսկ ներմուծման կառուցվածքում դեռևս մեծ տեսակարար կշիռ չեն կազմում արտադրական նշանակության ապրանքները, որը կնպաստեր արտադրության հնարավորությունների ընդլայնմանը:

Ընդ որում, միջազգային փորձը վկայում է, որ ներկայում տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովում են այն երկրները, որոնց արտահանման կառուցվածքը փոփոխվել է ցածր տեխնոլոգիատարության ապրանքներից դեպի բարձր տեխնոլոգիատարության ապրանքներ: Իսկ բնական ռեսուրսների վրա հիմնված ապրանքների արտահանման ուղղությամբ մասնագիտացումը ամենևին էլ բարձր տնտեսական աճի գրավական չէ: Պետք է նշել, որ համաձայան հետազոտությունների՝ ՀՀ արտահանման կառուցվածքում բարձրտեխնոլոգիական ապրանքների և ծառայությունների մասնաբաժինը նվազել է (Ա. Մարկոսյան, Է. Մաթևոսյան 2020, 13):

Այժմ դիտարկենք ՀՀ արտահանման և ներմուծման աշխարհագրական կառուցվածքը 2014-2022 թթ. ժամանակահատվածում: Արտահանման կառուցվածքում 2014 թ. առաջատարը ԵՄ երկրներն էին (31%), սակայն 2018 թ.-ից սկսած նրանց տեսակարար կշիռը նվազել է, և առաջատարը դարձել են ԵԱՏՄ երկրները, որոնց բաժին է ընկել ՀՀ արտահանման 28.5%-ը, իսկ ԵՄ երկրներին՝ 27.6%-ը: 2022 թ. ԵԱՏՄ երկրներին բաժին է ընկել ՀՀ արտահանման 46.8%-ը, իսկ միայն Ռուսաստանին՝ 45%-ը: Պետք է նշել, որ դեպի Ռուսաստան արտահանումը դիտարկվող ժամանակահատվածում միշտ ունեցել է բարձր տեսակարար կշիռ: Հայաստանից դեպի Ռուսաստան արտահանումը 2014-2022 թթ. Հայաստանի ընդհանուր արտահանման տեսակարար կշռում կազմել է միջինում 27%: Միևնույն ժամանակ 2022 թ. ԵՄ երկրներին բաժին է հասել ՀՀ արտահանման 14%-ը: Դեպի ԵՄ երկրներ արտահանման կառուցվածքում առաջատար դիրքեր են զբաղեցրել

Գերմանիան, Բելգիան, Նիդերլանդներն ու Բուլղարիան: Գերմանիային դիտարկվող ժամանակահատվածում միջինում բաժին է հասել ՀՀ արտահանման 5%-ը: Դեպի Գերմանիա արտահանման ամենաբարձր տեսակարար կշիռն արձանագրվել է 2014 թ.՝ ՀՀ արտահանման 11%, իսկ ամենացածրը՝ 2022 թ.՝ 2%: ՀՀ արտահանման խոշոր գործընկերներ են նաև Չինաստանը, Շվեյցարիան, Իրանը և Վրաստանը: Այս չորս երկրներին միասին 2014 թ. բաժին է ընկել ՀՀ արտահանման 24%-ը, իսկ 2022 թ.՝ 17%-ը:

Այժմ դիտարկենք ներմուծման աշխարհագրական բաշխվածությունը: Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ներմուծման կառուցվածքում առաջատարը միշտ եղել են ԵԱՏՄ երկրները, իսկ «առյուծի բաժինը» հասել է Ռուսաստանին: 2014-2022 թթ. ԵԱՏՄ երկրներից ներմուծման տեսակարար կշիռը ՀՀ ողջ ներմուծման մեջ միջինում կազմել է 31%, իսկ միայն Ռուսաստանից՝ 29%:

Ներմուծման ծավալներով երկրորդը ԵՄ երկրներն են: 2022 թ. ԵՄ երկրներին բաժին է հասել ՀՀ ներմուծման 20%-ը, ինչը 2021 թ. համեմատ աճել է 72%-ով՝ կազմելով 1.7 մլրդ ԱՄՆ դոլար: 2022 թ. ԵՄ երկրներից միայն Գերմանիային բաժին է հասել Հայաստանի ներմուծման 5.2%-ը: Պետք է նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ ներմուծման տեսակարար կշռում Գերմանիային բաժին է հասել ողջ ներմուծման միջինում 6%-ը: ՀՀ ներմուծման մեջ մեծ տեսակարար կշիռ է ունեցել նաև Չինաստանը: 2022 թ. Չինաստանից ներմուծումը կազմել է ՀՀ ներմուծման 4%-ը: 2014-2022 թթ. ցուցանիշը միջինում կազմել է 11%: Հարևան Վրաստանը և Իրանը 2022 թ. համապատասխանաբար ունեցել են 1.8% և 1.3% տեսակարար կշիռներ ՀՀ ողջ ներմուծման մեջ:

<u>ՀՀ արտահանման և ներմուծման ինտենսիվության համաթվերի հաշվարկը</u>

Քանի որ ներկայացված տվյալները ունեն բացարձակ բնույթ և հնարավորություն չեն տալիս գնահատելու ՀՀ և այլ երկրների առևտրի հարաբերական կարևորությունը, ուստի հաշվարկել ենք ՀՀ արտաքին առևտրի ինտենսիվության համաթիվը:

Առևտրի ինտենսիվության համաթիվը առաջարկվել է Բրաունի կողմից (1949 թ.), հետագայում զարգացվել է Կոջիմայի կողմից (1964 թ.): Կոջիմայի առևտրի ինտենսիվության համաթիվը կենտրոնանում է փոխադարձ առևտրի մակարդակի տատանումների վրա, ինչը տարբեր պաշտպանական խոչընդոտների արդյունք է (Garnaut, R. and Drysdale, P., 1994, 25 pages): Դրանց թվին են դասվում տրանսպորտային ծախսերը, հովանավորչությունը կամ էլ, օրինակ, սուբյեկտիվ պատճառներ՝ արտասահմանյան շուկայի վերաբերյալ ոչ կատարյալ տեղեկատվությունը: Առևտրի ինտենսիվության համաթիվը օգտագործվում է որպես ցուցանիշ ցույց տալու համար՝ գործընկեր երկրների միջև փոխադարձ առևտրի հոսքերն ամրապնդվում են, թե թուլանում: Այս համաթիվը բավական պարզ եղանակով ցույց է տալիս, թե արդյոք երկու երկրների միջև առևտրի ծավալներն ավել են/պակաս են, քան կարելի էր սպասել՝ ելնելով համաշխարհային առևտրում նրանց զբաղեցրած դիրքից: Համաթվի թերությունն այն է, որ հաշվի չի առնում երկրների աշխարհագրական մոտիկությունը, մինչդեռ վերջինս առևտրի արդյունավետության վրա մեծ ազդեցություն ունի:

Արտահանման ինտենսիվությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով է (Garnaut, R. and Drysdale, P., 1994, 25 pages) `

$$\boldsymbol{XII_{ij} = (X_{ij}/X_i)/[M_j/(M_w - M_i)]}$$

Որտեղ՝

- X_{ij} – i երկրի արտահանումն է j երկիր;
- X_i – i երկրի ընդհանուր արտահանման ծավալն է;
- M_j – j երկրի ներմուծման ընդհանուր ծավալն է;

- M_w – համաշխարհային ներմուծման ծավալն է;
- M_i – i երկրի ներմուծման ընդհանուր ծավալն է:

Ներմուծման ինտենսիվությունը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$\boldsymbol{MII_{ij} = (M_{ij}/M_i)/[X_j/(X_w - X_i)]}$$

Որտեղ՝

- M_{ij} – i երկրի ներմուծումն է j երկրից;
- M_i –i երկրի ընդհանուր ներմուծումն է;
- X_j –j երկրի ընդհանուր արտահանումն է;
- X_w – արտահանման համաշխարհային ծավալն է;
- X_i – i երկրի ընդհանուր արտահանումն է:

Եթե արդյունավետության ինդեքսը մեծ է մեկից, ապա դա ցույց է տալիս, որ երկիրը դեպի իր առևտրային գործընկեր արտահանում է ավելի շատ, քան պետք է լիներ՝ հաշվի առնելով համաշխարհային առևտրում նրա զբաղեցրած դիրքը: Իսկ եթե ինտենսիվությունը մեկից փոքր է, ապա ճիշտ է հակառակ պնդումը: Վերլուծենք ՀՀ և մի շարք երկրների միջև առևտրի ինտենսիվությունը:

Աղյուսակ 1.
ՀՀ արտահանման ինտենսիվությունը մի շարք երկրների միջև, 2014-2021 թթ.

Երկիրը	2014 թ.	2016 թ.	2018 թ.	2020 թ.	2021 թ.
ՀՀ-ԵԱՏՄ	4.3	6.6	7.8	10.4	10
ՀՀ-ՌԴ	5.1	8.1	9.7	12.9	12.2
ՀՀ-Բելառուս	1.4	2.6	1.5	3.5	3.4
ՀՀ-Ղազախստան	0.9	0.7	1.1	0.8	1.3
ՀՀ-Ղրղզստան	0.4	1.2	0.9	2.3	2.4
ՀՀ-ԵՄ	0.5	0.5	0.5	0.4	0.5
ՀՀ-Գերմանիա	1.3	0.6	0.9	0.2	0.2
ՀՀ-Շվեյցարիա	0.2	1.1	4.1	6.1	4.2
ՀՀ-Չինաստան	0.5	1.1	0.2	0.7	0.7
ՀՀ-Իրան	5.8	4.9	5.1	8.4	4.7
ՀՀ-Վրաստան	59.1	99.1	32.1	37.1	33.8

Համաձայն աղյուսակ 1-ի և աղյուսակ 2-ի տվյալների վերլուծության՝ Հայաստանում արտահանման և ներմուծման ինտենսիվության ցուցանիշները դիտվարկվող ժամանակահատվածում ԵԱՏՄ երկրների, Իրանի և Վրաստանի հետ արձանագրել են 1-ից բարձր միավորներ, ինչը վկայում է, որ Հայաստանն ինչպես արտահանում, այնպես էլ ներմուծում է տվյալ երկրներ ավելի շատ, քան պետք է լիներ՝ հաշվի առնելով համաշխարհային առևտրում այդ երկրների զբաղեցրած դիրքերը: Միևնույն ժամանակ, ցուցանիշների 1-ից բարձր արժեքները Վրաստանի և Իրանի հետ կապված են այն բանի հետ, որ Հայաստանն արտաքին աշխարհի հետ առևտրային հարաբերություններ հաստատում է հենց այս երկրների միջոցով՝ հաշվի առնելով փակ սահմանների առկայությունը հարևան Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Հետևաբար, միջնորդավորված առևտրի հաշվին Վրաստանի և Իրանի հետ առևտուրն իրականացվում է ավելի ինտենսիվ, քան երրորդ երկրների հետ:

Համաձայն աղյուսակների՝ ԵԱՏՄ երկրներից ավելի մեծ ինտենսիվություն բնորոշ է ՀՀ-Ռուսաստան առևտրային հարաբերություններին՝ արտահանման և ներմուծման տեսանկյունից: Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի համեմատաբար ցածր ցուցանիշները ևս մեկ անգամ վկայում են, որ ԵԱՏՄ երկրներից ՀՀ-ի համար ավելի մեծ հետաքրքրություն և կարևորություն ունի ՌԴ-ն: Մյուս կողմից,

սա հիմք է տալիս ենթադրելու, որ ԵԱՏՄ անդամ մյուս երկրների հետ դեռևս առևտրային ներուժի չիրացված հնարավորություններ կան, որոնք առավել օրակարգային են դառնում ռուսական ընթացիկ պատժամիջոցների համատեքստում:

ՀՀ-Ղազախստան և ՀՀ-Ղրղզստան արտահանման ինտենսիվության համաթվերը դիտարկվող ժամանակահատվածում միշտ գերազանցել են ներմուծման համաթվերին, ինչը նշանակում է, որ Ղազախստանի և Ղրղզստանի շուկաներն ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում ՀՀ-ի համար, քան ՀՀ շուկան այդ երկրների համար: Բելառուսի և Ռուսաստանի պարագայում ունենք հակառակ պատկերը:

Աղյուսակ 2.

ՀՀ ներմուծման ինտենսիվությունը մի շարք երկրների միջև, 2014-2021 թթ.

Երկիրը	2014 թ.	2016 թ.	2018 թ.	2020 թ.	2021թ.
ՀՀ-ԵԱՏՄ	7.3	11.5	7.9	14.6	14.2
ՀՀ-ՌԴ	8.8	13.9	9.4	17.5	16.7
ՀՀ-Բելառուս	3.1	3.7	3.5	7.0	5.4
ՀՀ-Ղազախստան	0.01	0.1	0.2	0.5	0.5
ՀՀ-Ղրղզստան	0.2	0.2	0.4	0.8	0.2
ՀՀ-ԵՄ	0.7	0.5	0.3	0.3	0.3
ՀՀ-Գերմանիա	0.4	0.5	0.6	0.6	0.5
ՀՀ-Շվեյցարիա	1.4	0.5	1.0	0.2	2.9
ՀՀ-Չինաստան	0.3	0.8	1.0	1.1	0.5
ՀՀ-Իրան	8.6	7.9	10.2	30.4	3.7
ՀՀ-Վրաստան	44.5	74.4	30.3	55.2	39.0

Ինչ վերաբերում է ՀՀ-ԵՄ երկրների փոխադարձ առևտրի ինտենսիվությանը, ապա համաձայն աղյուսակների՝ թե՛ արտահանման, թե՛ ներմուծման պարագայում ցուցանիշները արձանագրել են 1-ից ցածր արժեքներ, ինչը ենթադրում է, որ չի օգտագործվում շահավետ փոխադարձ առևտրի ողջ ներուժը: 2018 թ.-ից սկսած՝ ՀՀ-ԵՄ արտահանման ինտենսիվության համաթիվը սկսել է գերազանցել ներմուծման համաթվին: Աղյուսակների վերլուծության համաձայն՝ ՀՀ-Շվեյցարիա արտահանման ինտենսիվության համաթիվը 2016 թ-ից սկսած միշտ ունեցել է 1-ից բարձր արժեք, մինչդեռ ներմուծման ինտենսիվության համաթիվը մինչև 2021 թ. ունեցել է մինչև 1 արժեք:

Հայաստան-Չինաստան արտահանման և ներմուծման ինտենսիրվության համաթվի վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող 2014-2021 թթ. ընթացքում ներմուծման ինտենսիվությունը կազմել է միջինը 0.7 միավոր, իսկ արտահանմանը՝ 0.6 միավոր: Մյուս կողմից, ՀՀ առևտրի ծավալների խթանման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի այլընտրանքային շուկաների բացահայտումը՝ ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման համատեքստում: Մի կողմից, հաշվի առնելով չինական շուկայի ծավալները ՀՀ արտադրողների համար՝ առկա են արտահանման խթանման մեծ հնարավորություններ: Մյուս կողմից, չինական ապրանքները համաշխարհային տնտեսության մեջ հայտնի են էժան և որակյալ չափանիշներով, հետևաբար դրանք կարող են դառնալ ՀՀ ներմուծման այլընտրանքային տարբերակներ:

Այսպիսով, ՀՀ արտաքին առևտրի համապարփակ վերլուծությունը, ինչպես նաև արտահանման և ներմուծման ինտենսիվության գնահատումը հիմք են տալիս ենթադրելու, որ մենք շարունակում են արձանագրել արտաքին առևտրի ինչպես առանձին ապրանքախմբերի, այնպես էլ երկրների դիվերսիֆիկացիայի խնդիրներ: Բացի դրանից, ՀՀ արտաքին առևտրի ինտենսիվությունը, պայմանավորված տարբեր օբյեկտիվ և սյուբյետիվ պատճառներով, դեռևս շարունակում է մնալ

համակենտրոնացած մի քանի երկրների շուրջ: Սա խնդիրներ է ստեղծում տեղական արտադրության զարգացման և արտադրող ապրանքների միջազգային մրցունակության բարձրացման տեսանկյունից:

Եզրակացություն

ՀՀ արտաքին առևտրի վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման կառուցվածքում առկա են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, առևտի կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ արտահանման և ներմուծման թե՛ ապրանքային, թե՛ աշխարհագրական կառուցվածքը մնում են խիստ համակենտրոնացված, ինչը հաստատվում է նաև հեղինակի կողմից հաշվարկված ինտենսիվության համաթվի գնահատականով:

Մի ամբողջ շարք ապրանքների արտահանումը, որոնք ներկայում արտահանման ապրանքային կառուցվածքում ունեն զգալի տեսակարար կշիռ, չեն հիմնվում երկրի համեմատական առավելությունների վրա, հետևաբար չեն կարող ընդլայնվել, կամ արտահանումը չի կարող շարունակվել ապագայում: Մասնա-գիտանալով հումքի արտահանման բնագավառում՝ պետք է հաշվի առնվի, որ այդ իրողությունը կհանգեցնի երկրի ներսում կառուցվածքային ոչ բարենպաստ փոփոխությունների: Այսպես, ներմուծմանը փոխարինող ճյուղերից ռեսուրսները կսկսեն հոսել արտահանման կողմնորոշում ունեցող արդյունահանող ճյուղեր, որի հետևանքով կձևախեղվի երկրի տնտեսության կառուցվածքը, ինչպես նաև կավելանան ներմուծվող ապրանքների ծավալները: Ներմուծման առումով պետք է փաստել, որ ՀՀ ներմուծվող ապրանքնատեսակների մեջ բավական մեծ է այն ապրանքների տեսակարար կշիռը, որոնց արտադրություն կարելի է կազմակերպել տեղում: Բացի դրանից, ՀՀ ներմուծումը շատ թանկ արժե բարձր տրանսպորտային ծախսերի պատճառով, ինչն էլ բացասական ազդեցություն է ունենում առևտրային հաշվեկշռի, վերջին հաշվով՝ ՀՆԱ-ի աճի վրա:

ՀՀ և ԵԱՏՄ երկրների առևտրի ինտենսիվությունը գնահատելու նպատակով մեր կողմից առաջարկվել է հաշվարկել արտաքին առևտրի ինտենսիվության ինդեքսը: Ստացվածը վկայում է, որ ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ առևտուրն ավելին է, քան պետք է լիներ: ԵԱՏՄ առանձին երկրների հետ նշված ինդեքսի հաշվարկը ցույց տվեց, որ ԵԱՏՄ երկրներից ՀՀ-ի համար ավելի մեծ հետաքրքրություն և կարևորություն ունի ՌԴ-ը:

Մյուս կողմից, արտաքին առևտրի ինտենսիվության համաթվի հաշվարկվման արդյունքում բացահայտվել են մի շարք չիրացված հնարավորություններ ինչպես ԵԱՏՄ անդամ երկրների (բացառությամբ՝ Ռուսաստանի), այնպես էլ Չինաստանի ու եվրոպական երկրների հետ: Այս համատեքստում, առևտրային չիրացված հնարավորություններն ու դրանք հնարավորինս իրացնելը ուղղակիորեն անդրադառնալու են ինչպես ՀՀ արտաքին առևտրի, այնպես էլ ընդհանուր տնտեսության զարգացման վրա:

Չնայած արտաքին առևտրի ոլորտում արձանագրված դրական միտումներին՝ ոլորտի զարգացմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ շարունակում են մնալ չլուծված: Սակայն համակարգված ու ճշգրիտ քաղաքականությամբ հնարավոր է հասնել այնպիսի ցանկալի արդյունքների, ինչպիսիք են արտահանման ներուժի բացահայտումը, մրցունակ ոլորտների զարգացումը և, վերջապես, արտահանման ցուցանիշների բարելավումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշոտ Մարկոսյան, Էլյանորա Մաթևոսյան. Հայաստանի Հանրապետության տնտեսության (ՀՆԱ-ի) կառուցվածքային փոփոխությունները և դրանց միտումները. *Գիտական Արցախ, № 1(4)*, 2020, էջ 125-137:
2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 հունվար-դեկտեմբերին, https://www.armstat.am/am/?nid=82&id=2547
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011-2022 թթ., ՀՀ ԱՎԾ, https://www.armstat.am/am/?nid=586
4. Garnaut Ross and Drysdale Peter (1994). “Trade intensities and the analysis of bilateral trade flows in a many-country world: A survey in Asia-Pacific regionalism”, Readings in International Economic Relation.
5. United Nations General Assembly, seventy-third session, 56th meeting, General Assembly Adopts Resolution Urging Russian Federation to Withdraw Its Armed Forces from Crimea, Expressing Grave Concern about Rising Military Presence, https://www.un.org/press/en/2018/ga12108.doc.htm
6. World bank data: https://data.worldbank.org/

WORKS CITED

1. Ashot Markosyan, Elyanora Matevosyan. Hayastani Hanrapetut’yan tntesut’yan (HNA-i) karutsvatsqayin popoxut’ynery ev dranc mitumnery. *Gitakan Arcax, № 1(4)*, 2020, e'ch' 125-137 [Ashot Markosyan, Elyanora Matevosyan. Structural Changes in the Economy (GDP) of the Republic of Armenia and Trends of Cnahges, *Scientific Artsakh, № 1(4)*, 2020, p. 125-137], (In Armenian)
2. Garnaut Ross and Drysdale Peter (1994). “Trade Intensities and the Analysis of Bilateral Trade Flows in a Many-Country World: A Survey in Asia-Pacific Regionalism”, Readings in International Economic Relation.
3. Hayastani Hanrapetut’yan sots’ial-tntesakan vichaky 2022 hunvar-dektemberin [The Socio-Economic Situation of the Republic of Armenia in January-December 2022], https://www.armstat.am/am/?nid=82&id=2547 (In Armenian)
4. Hayastani vichakagrakan taregirq 2011-2022t't'., HH AVC', [Statistical Yearbook of Armenia 2011-2022, NSS of RA], https://www.armstat.am/am/?nid=586 (In Armenian)
5. United Nations General Assembly, seventy-third session, 56th meeting, General Assembly Adopts Resolution Urging Russian Federation to Withdraw Its Armed Forces from Crimea, Expressing Grave Concern about Rising Military Presence, https://www.un.org/press/en/2018/ga12108.doc.htm
6. World bank data: https://data.worldbank.org/

THE CURRENT STATE OF THE FOREIGN TRADE OF THE REPUBLIC OF ARMENIA: THE INTENSITY OF EXPORTS AND IMPORTS

TIGRAN MIKAYELYAN
Armenian State University of Economics, Faculty of Regulation of Economics and International Economic Relations, Department of "International Economic Relations", Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to conduct a comprehensive analysis of Armenian foreign trade on the main trends of exports, imports, trade turnover, exported and imported partner countries, and major commodity groups. In addition, the article calculated the Armenian export and import intensity index with several partner countries. The task of the work is to identify the main trends in Armenian foreign trade and assess the opportunities and potential for trade development. In this context, through a comparative analysis of comparable historical series, the author presented the trade processes recorded in Armenia during the years under review, identifying the main trends and directions.

The research results show that the Armenian foreign trade processes have limited diversification both by the exported and imported group of partner countries and by commodity groups. On the other hand, due to the foreign trade intensity index, a number of unrealized opportunities have been identified among the EAEU member states (with the exception of Russia) and with China and European countries. In this context, the unrealized trade opportunities and their realization will directly affect both the Republic of Armenia's foreign trade and the economy's development as a whole.

Thus, a comprehensive analysis of the Armenian foreign trade and an assessment of the intensity of exports and imports give reason to believe that we continue to fix diversification problems in individual commodity groups and foreign trade countries. In addition, the intensity of Armenia's foreign trade, due to various objective reasons, continues to be concentrated around several countries. All above-mentioned create problems in developing local production and increasing international competitiveness.

Key words: *Armenia, EAEU, EU, foreign trade, trade turnover, export, import, intensity.*

ТЕКУЩЕЕ СОСТОЯНИЕ ВНЕШНЕЙ ТОРГОВЛИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ИНТЕНСИВНОСТЬ ЭКСПОРТА И ИМПОРТА

ТИГРАН МИКАЕЛЯН
аспирант Кафедры международных экономических отношений факультета регулирования экономики и международных экономических отношений Армянского государственного экономический университета,
г. Ереван, Республика Армения

Цель данной статьи – провести комплексный анализ внешней торговли РА по основным тенденциям экспорта, импорта, товарооборота, экспортируемых и импортируемых стран-партнеров и основных товарных групп. Кроме того, в статье был проведен расчет индекса интенсивности экспорта и импорта РА с несколькими странами-партнерами. Задача работы – выявить основные тенденции внешней торговли РА, а также оценить возможности и потенциал развития торговли. В этом контексте, посредством сравнительного анализа сопоставимых исторических рядов автор представил торговые процессы, зафиксированные в Армении в течение рассматриваемых лет, выявив основные тенденции и направления.

Результаты проведенного исследования показывают, что внешнеторговые процессы РА имеют ограниченную диверсификацию как по экспортируемой и импортируемой группе стран-партнеров, так и по товарным группам. С другой стороны, в результате индекса интенсивности внешней торговли выявлен ряд нереализованных возможностей как со странами-членами ЕАЭС (за исключением России), так и с Китаем и европейскими странами. В этом контексте нереализованные торговые возможности и их реализация напрямую отразятся как на внешней торговле РА, так и на развитие экономики в целом.

Таким образом, комплексный анализ внешней торговли РА, а также оценка интенсивности экспорта и импорта дают основания полагать, что мы продолжаем фиксировать проблемы диверсификации как на отдельных товарных групп, так и на стран внешней торговли. Кроме того, интенсивность внешней торговли РА, обусловленная различными объективными причинами, все еще продолжает оставаться сконцентрированной вокруг нескольких стран. Это создает проблемы с точки зрения развития местного производства и повышения международной конкурентоспособности.

Ключевые слова: *Армения, ЕАЭС, ЕС, внешняя торговля, товарооборот, экспорт, импорт, интенсивность.*